ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՈՒՄ

Հ ՈՒ Շ Ա Տ Ե Տ Ր
ԳՅՈՒՂԵՐՈՒՄ ՀԱՇՎԱՐԱՐԻ

Շրջան ----------

Համայնք ---------- Բնակավայր ----------

ՀԱՇՎԱՅԻՆ ՏԵՂԱՄԱՍ N-------

Հաշվարար ----------
(Ազգանուն, անուն, հայրանուն)

ՀՐԱՀԱՆԳՉԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍ N ------

Հրահանգիչ-հսկիչ ----------
(Ազգանուն, անուն, հայրանուն)

Հրահանգչական տեղամասի հասցեն ----------

----------Հեռախոսի համարը ----------

ՀԱՇՎԱՌՄԱՆ ՏԵՂԱՄԱՍ N-------

Հաշվառման տեղամասի վարիչ ----------
(Ազգանուն, անուն, հայրանուն)

Հաշվառման տեղամասի հասցեն ----------

----------Հեռախոսի համարը ----------

Ստեփանակերտ 2020

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Արցախի Հանրապետությունում գյուղատնտեսական համատարած հաշվառումն անց է կացվում **2020թ. հոկտեմբերի 11-31-ը ներառյալ**:

2. **Հաշվառումն անց է կացվում հաշվարարների կողմից** տնտեսություններ այցելելով, տնտեսությունների գլխավորի կամ չափահաս անդամներից որևէ մեկի անմիջական հարցման և տվյալները հարցաթերթում լրացնելու միջոցով:

3. **Համաձայն «Գյուղատնտեսական համատարած հաշվառման մասին» ԼՂՀ օրենքի՝** գյուղատնտեսական համատարած հաշվառմանը մասնակցելը կրում է պարտադիր բնույթ բոլոր գյուղատնտեսական արտադրանք արտադրողների համար, և նրանք պարտավոր են ամբողջական և սպառիչ պատասխաններ (տեղեկություններ) տրամադրել հաշվառման հարցաթերթի բոլոր հարցերին:

4. Նույն օրենքով սահմանված է նաև, որ ֆիզիկական և իրավաբանական անձանց վերաբերյալ անհատական տվյալներին տիրապետող լիազոր մարմնի աշխատակիցներին (այսուհետ՝ աշխատակիցներ) **արգելվում է այլ անձի (անձանց) հաղորդել գյուղատնտեսական համատարած հաշվառման լրացված փաստաթղթերի բովանդակությունը**:

5. Համաձայն «Գյուղատնտեսական համատարած հաշվառման մասին» ԼՂՀ օրենքի՝ գյուղատնտեսական հաշվառման սկզբնական (անհատական) տվյալների օգտագործման կարգի խախտման, հարցաթերթը ոչ ամբողջական, սխալ տվյալներով լրացնելու դեպքում գյուղատնտեսական համատարած հաշվառման աշխատակիցները պատասխանատվություն են կրում ԱՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Իսկ հարցմանը պատասխանելուց հրաժարվողներին հաշվարարը պետք է հիշեցնի, որ գյուղատնտեսական համատարած հաշվառման հարցաթերթի հարցերին պատասխանելուց հրաժարվելը, ոչ ամբողջական, սխալ տվյալներ ներկայացնելն առաջացնում է պատասխանատվություն՝ ԱՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հաշվարարի գործառույթները
ԱՀ 2020թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման անցկացման ընթացքում

1. ԱՀ 2020թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման (այսուհետ՝ ԳՀՀ) անցկացման ժամանակաընթացքում՝ **2020թ. հոկտեմբերի 11-31-ը ներառյալ**, յուրաքանչյուր հաշվարար պետք է իրականացնի իրեն հատկացված հաշվային տեղամասի տնտեսությունների հարցումն ու ԳՀՀ համապատասխան հարցաթերթի լրացումը:

2. Հաշվարարի աշխատանքը շատ կարևոր է, քանի որ հաշվարարի կողմից է իրականացվում ԳՀՀ հարցաթերթի լրացումը՝ տեղեկատվության հավաքագրումը:

3. ԳՀՀ անցկացման ժամանակահատվածում հաշվարարի կողմից իրականացվող աշխատանքները կարելի է բաժանել երեք փուլի՝

ՓՈՒԼ I – Նախապատրաստական աշխատանքներ՝ հոկտեմբերի 7-9-ը, հաշվարարը պետք է նախնական շրջայց կատարի իր հաշվային տեղամասի բոլոր տնտեսությունները և նրանց տեղեկացնի անցկացվելիք ԳՀՀ մասին:

ՓՈՒԼ II- Գյուղատնտեսական համատարած հաշվառման անցկացում (տնտեսությունների հաշվառում)՝ **հոկտեմբերի 11-31-ը ներառյալ,** այցելի իր հաշվային տեղամասի յուրաքանչյուր տնտեսություն և տնտեսությունների գլխավոր անդամի կամ չափահաս անդամներից որևէ մեկի (ով կարող է ճշգրիտ պատասխանել հարցաթերթի հարցերին) հարցման միջոցով լրացնի ԳՀՀ հարցաթերթը:

ՓՈՒԼ III- Վերահսկիչ աշխատանքներ՝ նոյեմբերի 1-4-ը, հրահանգիչ-հսկիչի հետ միասին մասնակցի ընտրանքային վերահսկիչ շրջայցին:

4. Յուրաքանչյուր հաշվարար ***պատասխանատու*** է իր հաշվային տեղամասում ԳՀՀ ժամանակին և որակով անցկացնելու, սահմանված կարգով տնտեսությունների հաշվառումն իրականացնելու, ինչպես նաև ԳՀՀ հարցաթերթն ամբողջական և որակով լրացնելու համար:

I. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

1. Հրահանգավորում և պատրաստվածության ստուգում անցնելուց հետո հրահանգիչ-հսկիչից հաշվարարը կստանա **հաշվարարի հուշատետրը**, որտեղ աղյուսակ 1-ում հրահանգիչ-հսկիչի կողմից լրացված կլինի հաշվային տեղամասի մեջ մտնող բոլոր գյուղական համայնքների/բնակավայրերի, ինչպես նաև դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի տնտեսությունների հասցեները՝ ըստ առանձին համայնքների/բնակավայրերի և բնակավայրերի տարածքում գտնվող այլ բնակատեղերի:

2. Եթե մեկ հաշվային տեղամասում ներառված է տվյալ համայնքի/բնակավայրի մի մասը, ապա աղյուսակ 1-ի 1-ին սյունակում պետք է հրահանգիչ-հսկիչի կողմից կատարված լինի համապատասխան (օրինակ՝ «Նորագյուղ գյուղի մի մասը») գրառումը: Վերջին տողում հաշվարկվում և գրվում է ընդամենը հաշվային տեղամասում ներառված տնտեսությունների քանակի վերաբերյալ ցուցանիշը: Հաջորդ՝ 2-4-րդ սյունակներում տվյալ համայնքի հաշվային տեղամասի կազմի մեջ ներառված յուրաքանչյուր տնտեսության հասցեն գրվում է առանձին տողով:

3. Եթե մեկ հաշվային տեղամասում ներառված են մեկից ավելի համայնքներ/բնակավայրեր կամ մեկ համայնքը/բնակավայրն ամբողջությամբ և մեկ այլ համայնքի/բնակավայրի մի մասը, ապա աղյուսակ 1-ի 1-ին սյունակում հրահանգիչ-հսկիչի կողմից գրառվում են սկզբում մեկ համայնքի/բնակավայրի տնտեսությունների ցուցակները և գրվում հանրագումարը, այնուհետև մյուս համայնքի/բնակավայրի և/կամ համայնքի/բնակավայրի մի մասի հանրագումարը, և վերջում հաշվարկվում և գրվում է ընդամենը հաշվային տեղամասում ներառված տնտեսությունների քանակի վերաբերյալ ցուցանիշը: Հաջորդ՝ 2-4-րդ սյունակներում տվյալ համայնքի/բնակավայրի հաշվային տեղամասի կազմի մեջ ներառված յուրաքանչյուր տնտեսության հասցեն գրվում է առանձին տողով:

4. **Նախնական շրջայցը սկսելուց առաջ.**

- *անհրաժեշտ է ճշտել հաշվային տեղամասի սահմանները,*
- *եթե մեկ համայնքը/բնակավայրը բաժանված է մի քանի հաշվային տեղամասերի միջև, կամ հաշվային տեղամասը բաղկացած է մի քանի համայնքներից/բնակավայրերից, ապա անհրաժեշտ է ճշտել հաշվային տեղամասի սահմանները՝ հրահանգիչ-հսկիչի և հարակից տեղամասերի հաշվարարների հետ տեղանք դուրս գալով,*

- *այն համայնքներում, որտեղ ցուցակագրողների կողմից կատարվել են ցուցակագրման աշխատանքներ, տեղամասի սահմաններն անհրաժեշտ է ճշտել՝ դրանք համեմատելով նաև հաշվային տեղամասի սխեմատիկ հատակագծի հետ:*

5. **Հոկտեմբերի 7-9-ը** հաշվարարը պետք է այցելի իր հուշատետրի (հաշվային տեղամասի) աղյուսակ 1-ում գրառված բոլոր հասցեները (տներ, վագոն-տնակներ, մեկուսացված շենքեր, ոչ բնակելի տներ (շինություններ) և այլն), որտեղ բնակվում են տնտեսություններ, հարցման միջոցով լրացնի իր հուշատետրի աղյուսակ 1-ի 5-րդ, 6-րդ և 7-րդ սյունակներում պահանջվող տվյալները (ցուցանիշի առկայության դեպքում դնի **«+»** նշանը, իսկ բացակայության դեպքում՝ **«-»** նշանը) և, տնտեսության անդամների հետ համաձայնեցնելով, 8-րդ սյունակում նշի, թե երբ է հարմար այցելել տնտեսությանը և լրացնել հաշվառման հարցաթերթը:

6. Յուրաքանչյուր տուն այցելելիս անհրաժեշտ է, որ հաշվարարը բնակիչներին տեղեկացնի անցկացվելիք ԳՀՀ մասին և նշի դրա կարևորությունը:

7. Աղյուսակի 9-րդ սյունակում հաշվարարը կարող է կատարել ցանկացած գրառում թե' նախնական շրջագայության, թե' հաշվառման ընթացքում: Սակայն, եթե հաշվառման ընթացքում որևէ տնտեսության հարցաթերթի լրացման հետ մեկտեղ հաշվարարը լրացրել է նաև ԳՀՀ հարցաթերթի հավելված (հարցաթերթի հավելվածի լրացման անհրաժեշտությունը կպարզվի հարցման ընթացքում), ապա այդ մասին անպայման պետք է գրառում կատարի տվյալ տնտեսությանը վերաբերող համապատասխան տողի 9-րդ սյունակում:

8. Եթե նախնական շրջագայության (շրջայցի) ժամանակ հաշվարարը պարզի, որ

- հաշվային տեղամասում որևէ բնակատեղ կամ հիմնական բնակելի տներից տարանջատված (հեռու գտնվող) տուն/տների խումբ հրահանգիչ-հսկիչի կողմից չի ներառվել հուշատետրի աղյուսակ 1-ի 1-ին՝ «Լրացվում է հրահանգիչ-հսկիչի կողմից» հատվածում,
- ներառված է, բայց փաստացի գոյություն չունի,
- առկա են այլ անհամապատասխանություններ,

այսինքն՝ պարզի, որ հրահանգիչ-հսկիչի կողմից աղյուսակ 1-ի 1-ին հատվածում նախապես գրառված տների և տնտեսությունների քանակը չի համապատասխանում դրանց փաստացի քանակին, ապա պետք է

տարբերության մասին հայտնի տեղամասի հրահանգիչ-հսկիչին: Վերջինս պետք է պարզի դրա պատճառը և համապատասխան լրացում կամ ուղղում կատարի հաշվարարի հուշատետրի 1-ին աղյուսակի համապատասխան գրառումներում:

9. Եթե հայտնաբերվեն բաց թողնված տներ, ապա անհրաժեշտ է դրանք ավելացնել աղյուսակի վերջում՝ վերջինը գրված տնից հետո՝ նշելով այն բնակավայրի անվանումը, որի տարածքում դրանք գտնվում են: Հրահանգիչ-հսկիչի կողմից սխալմամբ գրառված տների հասցեները պետք է ջնջել տվյալ հաշվային տեղամասի տնտեսությունների ցուցակից: Այդ դեպքերում տվյալ բնակավայրի և ընդամենը հաշվային տեղամասի հանրագումարների տողերում անհրաժեշտ է կատարել համապատասխան փոփոխություններ՝ լրացնելով մնացած սյունակներն ըստ պահանջվող տեղեկատվության:

10. Իր հաշվային տեղամասում ԳՀՀ անցկացնելու համար հաշվառման նախօրեին տեղամասի հրահանգիչ-հսկիչից հաշվարարը պետք է ստանա անհրաժեշտ քանակությամբ 1-ԳՀՀ հարցաթերթեր, 1-ԳՀՀ հարցաթերթի հավելվածներ, այլ փաստաթղթեր և նյութեր և դրանց քանակները լրացնի իր հուշատետրի աղյուսակ 2-ում:

II. ԳՀՀ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

1. ԳՀՀ անցկացման օրերի ընթացքում (**հոկտեմբերի 11-31-ը ներառյալ**) հաշվարարը պետք է շրջագայի իր հաշվային տեղամասի բոլոր տները և տնտեսության գլխավորի կամ չափահաս անդամներից որևէ մեկի հարցման միջոցով յուրաքանչյուր **տնտեսության** համար լրացնի ԳՀՀ հարցաթերթ:

2. Չնայած որ հաշվարարի հուշատետրում յուրաքանչյուր տնտեսություն գրառված է առանձին տողով, այնուամենայնիվ, մինչև ԳՀՀ հարցաթերթ լրացնելը, հաշվարարը մեկ անգամ ևս պետք է ճշտի, թե քանի տնտեսություն է բնակվում տվյալ տանը, այնուհետև անցնի տվյալ տնտեսության/տնտեսությունների հարցմանը և **յուրաքանչյուր տնտեսության համար առանձին հարցաթերթի լրացմանը**՝ համաձայն «Գյուղատնտեսական համատարած հաշվառման 1-ԳՀՀ հարցաթերթի և դրա հավելվածի լրացման» հրահանգի:

3. ԳՀՀ հարցաթերթը պետք է լրացնել հարցման եղանակով՝ հարցաթերթից ընթերցելով յուրաքանչյուր հարց: Պատասխանների ճշգրտությունը հաստատող փաստաթղթեր հաշվարարը չի պահանջում, սակայն պետք է համոզվի, որ հարցվողները հստակ հասկացել են հարցը և ճիշտ պատասխաններ են տալիս դրանց: Ընդ որում, հաշվարարը պատասխանողին կարող է հուշել, որ հարցաթերթում բերված հարցերին ճշգրիտ պատասխանելու համար նպատակահարմար է անհրաժեշտության դեպքում (չի հիշում ճշգրիտ թիվը կամ կասկածում է) օգտվել համապատասխան աղբյուրներից (փաստաթղթերից):

4. Հարցման ավարտից հետո հաշվարարը պետք է համոզվի, որ հարցաթերթի բոլոր բաժիններն ըստ հարցերի ներկայացվել են պատասխանողին, և որ տրված պատասխանները լրացված են, եթե հաշվարարը նկատի, որ առկա են բացթողումներ, ապա մեկ անգամ ևս պետք հարցադրումը կրկնի և փորձի լրացնել դրանք, որից հետո միայն հարցաթերթի վերջին էջի սահմանված մասում լրացնի հարցմանը պատասխանող տնտեսության անդամի ազգանունը, ստորագրի և գրի լրացման ամսաթիվը:

5. **Յուրաքանչյուր օրվա վերջում** հաշվարարը պետք է ստուգի տվյալ օրվա ընթացքում լրացրած հարցաթերթերը (դրանց լրացման ամբողջականությունն ու ճշգրտությունը), ինչպես նաև լրացված հարցաթերթից հաշվային տեղամասի **ամփոփ տեղեկագրում** (Ձև N 1-գյուղական) գրառի պահանջվող համապատասխան տեղեկատվությունը, իսկ յուրաքանչյուր չորրորդ օրը (հոկտեմբերի 14-ին, 18-ին, 22-ին, 26-ին և 31-ին) այդ օրվա դրությամբ հաշվեգրված տվյալների հանրագումարային աճողական ցուցանիշները պետք է հաղորդի հրահանգիչ-հսկիչին: ԳՀՀ ժամանակ հաշվային տեղամասի ամփոփ տեղեկագիրը (Ձև N 1-գյուղական) լրացվում է յուրաքանչյուր հաշվային տեղամասի ամփոփ տվյալները ստանալու համար:

6. Այն դեպքում, երբ հաշվարարը 3 անգամ այցելել է և չի հանդիպել տնտեսության գլխավորին կամ չափահաս անդամներից որևէ մեկին, ում հետ պետք է իրականացնի հարցումը, ապա անհրաժեշտ է թողնել **«գրություն նրանց, ում դժվար է տանը գտնել»**, որով խնդրվում է տնտեսության անդամներից մեկին զանգահարել հաշվարարին կամ հրահանգչական տեղամաս՝ ԳՀՀ հարցաթերթի լրացման գործընթացը կազմակերպելու համար: Տնտեսություններ այցելելու և անդամներից որևէ մեկին չհանդիպելու դեպքում

հաշվարարն անպայման այդ մասին պետք է տեղյակ պահի հրահանգիչ-հսկիչին, ով իր մոտ պետք է նշում կատարի հաշվարարի այցելությունների վերաբերյալ:

7. ԳՀՀ անցկացման ժամանակահատվածում հաշվարարն ամեն օր հրահանգիչ-հսկիչի կողմից նշանակված ժամին պետք է ներկայանա հրահանգչական տեղամաս և ստուգման ներկայացնի լրացված փաստաթղթերը, հրահանգիչ-հսկիչի ցուցումով (հրահանգով սահմանված) ուղղի սխալ կամ կիսատ կատարված գրառումները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ կրկին այցելի այդ տները:

8. ԳՀՀ հարցաթերթի լրացումը կատարվում է ԱՀ Վիճակագրության պետական խորհրդի կողմից հաստատված «Գյուղատնտեսական համատարած հաշվառման 1-ԳՀՀ հարցաթերթի և դրա հավելվածի լրացման» հրահանգի պահանջներին համապատասխան:

9. Բոլոր գրառումները հարկավոր է կատարել հարցի համար խիստ սահմանված զոտում կամ հատուկ գծված վանդակում:

10. Փաստաթղթերն անհրաժեշտ է լրացնել հնարավորինս մաքուր՝ առանց ջնջումների, իսկ ուղղումներ լինելու դեպքում հարկավոր է դրանք կատարել խնամքով, ընթեռնելի և յուրաքանչյուր ուղղման դիմաց դնել ուղղում կատարողի ստորագրությունը:

11. Համոզվելով, որ իր հաշվային տեղամասի յուրաքանչյուր տնտեսության համար ԳՀՀ հարցաթերթը լրացված է ամբողջությամբ, և ամփոփ տեղեկագրում **(Ձև N1-գյուղական)** պահանջվող տվյալները հարցաթերթից արտագրվել են ճիշտ՝ հաշվարարը պետք է ամփոփի հանրագումարն ըստ առանձին համայնքի/բնակավայրի, եթե հաշվային տեղամասի կազմի մեջ մտնում են մեկից ավելի համայնքներ/բնակավայրեր: Իսկ եթե հաշվային տեղամասը կազմված է բնակավայրի մի մասից, ապա պետք է ամփոփել հանրագումարը համայնքի/բնակավայրի այդ մասի համար:

12. Ավարտելով ԳՀՀ հարցաթերթերի լրացումը իր հաշվային տեղամասի բոլոր համայնքների/բնակավայրերի տնտեսություններում և համոզվելով, որ ոչ մի համայնք/բնակավայր, ոչ մի տնտեսություն հաշվառումից դուրս չի մնացել՝ անհրաժեշտ է հաշվարկել հաշվային տեղամասի տվյալների հանրագումարը և լրացնել ամփոփ տեղեկագրում (**Ձև N 1-գյուղական**)՝ առաջնորդվելով ամփոփ տեղեկագիրը լրացնելու ցուցումներով:

13. ԳՀՀ նյութերը հրահանգիչ-հսկիչին հանձնելուց առաջ հաշվարարը պետք է մեկ անգամ ևս մանրազնին ստուգի լրացված բոլոր փաստաթղթերի լրացման ամբողջականությունն ու ճշտությունը, որպեսզի վերացնի հնարավոր բոլոր անճշտությունները, ուղղի սխալ գրառումները, իսկ հուշատետրի վերջին էջում անպայման լրացնի «Հաշվարարի դիտողություններն ու առաջարկությունները» բաժինը:

14. Հաշվարարը ԳՀՀ լրացված հարցաթերթերը պետք է դասավորի պայուսակում՝ ըստ դրանց հերթական համարների:

15. Յուրաքանչյուր բնակավայրի (բնակավայրի մասի) գյուղատնտեսական հաշվառման առաջին հարցաթերթի վրա պայուսակում պետք է դրվի ուղեկցող թերթը, այնուհետև՝ հաշվային տեղամասի ամփոփ տեղեկագրերը, հուշատետրը և հրահանգիչ-հսկիչից ստացած բոլոր օժանդակ նյութերը:

16. Դրանք բոլորը, ինչպես նաև չօգտագործված և վնասված հարցաթերթերն ու այլ փաստաթղթերը պետք է հաշվով հանձնել հրահանգիչ-հսկիչին՝ լրացնելով հուշատետրի աղյուսակ 2-ի համապատասխան սյունակները:

III. ՎԵՐԱՀՍԿԻՉ ՇՐՋԱՅՑ

1. Հրահանգիչ-հսկիչի կողմից սահմանված օրը՝ **նոյեմբերի 1-ից մինչև 4-ը ժամանակահատվածում**, հաշվարարը պետք է ներկայանա հրահանգչական տեղամաս՝ վերահսկիչ շրջայցին մասնակցելու և ԳՀՀ նյութերն անձամբ հրահանգիչ-հսկիչին հանձնելու համար:

2. Վերահսկիչ շրջայցն անցկացվում է բոլոր հաշվային տեղամասերում՝ դրանցից յուրաքանչյուրում ընդգրկելով բնակելի միավորների 10%-ը, որի ընտրանքը կատարվում է հաշվառման տեղամասի վարիչի և նրա օգնականի կողմից, որպեսզի ստուգվի հաշվարարի աշխատանքը:

3. Վերահսկիչ շրջայցն անցկացնում է տեղամասի հրահանգիչ-հսկիչը հաշվարարի հետ միասին: Ընդ որում, վերահսկիչ շրջայցի ժամանակ հրահանգիչ-հսկիչն է որոշում, թե հաշվարարը որ հաշվային տեղամասի վերահսկիչ շրջայցին է մասնակցելու (բացառելով տվյալ հաշվարարի հաշվային տեղամասը):

4. Եթե վերահսկիչ շրջայցի ժամանակ պարզվի, որ հաշվարարի կողմից հաշվառման ենթակա որևէ տնտեսություն բաց է թողնվել, ապա այդ

տնտեսության համար լրացվում է/են ԳՀՀ անհրաժեշտ փաստաթուղթ/փաստաթղթեր:

5. **Վերահսկիչ շրջայցի ավարտից հետո** հաշվարարը հրահանգիչ-հսկիչի հետ միասին հաշվային տեղամասի կազմի մեջ մտնող յուրաքանչյուր համայնքի/բնակավայրի համար (եթե տեղամասը կազմված է համայնքի/բնակավայրի մի մասից, ապա այդ մասի համար) պետք է լրացնի «Ուղեկցող թերթ» (**Ձև N 5**) ձևաթուղթը և հաշվային տեղամասի ամփոփ տեղեկագրի (**Ձև N 1-գյուղական**) դիմային էջի համապատասխան հատվածը: Ուղեկցող թերթում անհրաժեշտ է լրացնել հասցեամասը, նշում կատարել ուղեկցող թերթը կազմված է «ամբողջ բնակավայրի» կամ «դրա մի մասի համար» համապատասխան վանդակներից մեկում, ինչպես նաև տվյալ բնակավայրի համար լրացված հարցաթերթի և հարցաթերթի հավելվածների քանակի վերաբերյալ տվյալները:

Եթե տվյալ հաշվային տեղամասում ներառված են մեկից ավելի գյուղական բնակավայրեր, ապա ուղեկցող թերթ պետք է կազմել դրանցից յուրաքանչյուրի համար և պահանջվող տեղեկատվությունը լրացնել առանձին՝ դրանցից յուրաքանչյուրի համար, իսկ հաշվարարի կողմից կազմված հարցաթերթերի և բնակելի միավորների համարակալումը փոխել՝ յուրաքանչյուր բնակավայրի համար սկսելով հերթական համարակալմամբ:

ԱՂՅՈՒՍԱԿ 1. ՀԱՇՎԱՅԻՆ ՏԵՂԱՄԱՍԻ ՄԵՋ ՄՏՆՈՂ

Լրացվում է հրահանգիչ-հսկիչի կողմից			
Գյուղական համայնքի/ բնակավայրի և/կամ բնակավայրից հեռու գտնվող բնակատեղի անվանումը	Փողոցի, նրբանցքի, անցուղու և այլնի անվանումը	Տան համարը	Տնտեսության գլխավորի ազգանունը, անունը և հայրանվան սկզբնատառը
1.	*2.*	*3.*	*4.*

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

Լրացվում է հաշվարարի կողմից՝ նախնական շրջագայության ժամանակ				
Տնտեսությունում առկայությունը			ԳՀՀ ժամանակ տուն այցելելու ամսաթիվը	Գրառումներ
գյուղ. նշանակության և/կամ տնամերձ հողերի	գյուղատնտեսական կենդանիների	գյուղատնտեսական տեխնիկայի		
5.	*6.*	*7.*	*8.*	*9.*

Շարունակություն

Լրացվում է հրահանգիչ-հսկիչի կողմից			
Գյուղական համայնքի/ բնակավայրի և/կամ բնակավայրից հեռու գտնվող բնակատեղի անվանումը	Փողոցի, նրբանցքի, անցուղու և այլնի անվանումը	Տան համարը	Տնտեսության գլխավորի ազգանունը, անունը և հայրանվան սկզբնատառը
1.	*2.*	*3.*	*4.*

Լրացվում է հաշվարարի կողմից՝ նախնական շրջագայության ժամանակ				
Տնտեսությունում առկայությունը			ԳՀՀ ժամանակ տուն այցելելու ամսաթիվը	Գրառումներ
գյուղ. նշանակու-թյան և/կամ տնամերձ հողերի	գյուղատընտեսական կենդանի-ների	գյուղատընտեսական տեխնի-կայի		
5.	*6.*	*7.*	*8.*	*9.*

Շարունակություն

Լրացվում է հրահանգիչ-հսկիչի կողմից			
Գյուղական համայնքի/ բնակավայրի և/կամ բնակավայրից հեռու գտնվող բնակատեղի անվանումը	Փողոցի, նրբանցքի, անցուղու և այլնի անվանումը	Տան համարը	Տնտեսության գլխավորի ազգանունը, անունը և հայրանվան սկզբնատառը
1.	*2.*	*3.*	*4.*

Լրացվում է հաշվարարի կողմից՝ նախնական շրջագայության ժամանակ				
Տնտեսությունում առկայությունը			ԳՀՀ ժամանակ տուն այցելելու ամսաթիվը	Գրառումներ
գյուղ. նշանակու-թյան և/կամ տնամերձ հողերի	գյուղատընտեսական կենդանի-ների	գյուղատընտեսական տեխնի-կայի		
5.	*6.*	*7.*	*8.*	*9.*

Շարունակություն

Լրացվում է հրահանգիչ-հսկիչի կողմից			
Գյուղական համայնքի/ բնակավայրի և/կամ բնակավայրից հեռու գտնվող բնակատեղի անվանումը	Փողոցի, նրբանցքի, անցուղու և այլնի անվանումը	Տան համարը	Տնտեսության գլխավորի ազգանունը, անունը և հայրանվան սկզբնատառը
1.	*2.*	*3.*	*4.*

Լրացվում է հաշվարարի կողմից՝ նախնական շրջագայության ժամանակ				
Տնտեսությունում առկայությունը			Գ.Հ.Հ ժամանակ տուն այցելելու ամսաթիվը	Գրառումներ
գյուղ. նշանակու-թյան և/կամ տնամերձ հողերի	գյուղատընտեսական կենդանի-ների	գյուղատընտեսական տեխնի-կայի		
5.	*6.*	*7.*	*8.*	*9.*

Շարունակություն

Լրացվում է հրահանգիչ-հսկիչի կողմից			
Գյուղական համայնքի/ բնակավայրի և/կամ բնակավայրից հեռու գտնվող բնակատեղի անվանումը	Փողոցի, նրբանցքի, անցուղու և այլնի անվանումը	Տան համարը	Տնտեսության գլխավորի ազգանունը, անունը և հայրանվան սկզբնատառը
1.	*2.*	*3.*	*4.*

Լրացվում է հաշվարարի կողմից՝ նախնական շրջագայության ժամանակ				
Տնտեսությունում առկայությունը			ԳՀՀ ժամանակ տուն այցելելու ամսաթիվը	Գրառումներ
գյուղ. նշանակու-թյան և/կամ տնամերձ հողերի	գյուղատընտեսական կենդանի-ների	գյուղատընտեսական տեխնի-կայի		
5.	*6.*	*7.*	*8.*	*9.*

Շարունակություն

Լրացվում է հրահանգիչ-հսկիչի կողմից			
Գյուղական համայնքի/ բնակավայրի և/կամ բնակավայրից հեռու գտնվող բնակատեղի անվանումը	Փողոցի, նրբանցքի, անցուղու և այլնի անվանումը	Տան համարը	Տնտեսության գլխավորի ազգանունը, անունը և հայրանվան սկզբնատառը
1.	*2.*	*3.*	*4.*

Լրացվում է հաշվարարի կողմից՝ նախնական շրջագայության ժամանակ				
Տնտեսությունում առկայությունը			ԳՀՀ ժամանակ տուն այցելելու ամսաթիվը	Գրառումներ
գյուղ. նշանակու-թյան և/կամ տնամերձ հողերի	գյուղատընտեսական կենդանի-ների	գյուղատընտեսական տեխնի-կայի		
5.	*6.*	*7.*	*8.*	*9.*

Շարունակություն

Լրացվում է հրահանգիչ-հսկիչի կողմից			
Գյուղական համայնքի/ բնակավայրի և/կամ բնակավայրից հեռու գտնվող բնակատեղի անվանումը	Փողոցի, նրբանցքի, անցուղու և այլնի անվանումը	Տան համարը	Տնտեսության գլխավորի ազգանունը, անունը և հայրանվան սկզբնատառը
1.	*2.*	*3.*	*4.*

Լրացվում է հաշվարարի կողմից՝ նախնական շրջագայության ժամանակ				
Տնտեսությունում առկայությունը			ԳՀՀ ժամանակ տուն այցելելու ամսաթիվը	Գրառումներ
գյուղ. նշանակու-թյան և/կամ տնամերձ հողերի	գյուղատընտեսական կենդանի-ների	գյուղատընտեսական տեխնի-կայի		
5.	*6.*	*7.*	*8.*	*9.*

ԱՂՅՈՒՍԱԿ 2. ՀԱՇՎԱՐԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՍՏԱՑԱԾ ԵՎ ՀԱՆՁՆԱԾ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ

	Ն յ ու թ ե ր	Ստացել է	Հանձնել է		
			լրացրած	մաքուր	վնասված
1.	*2.*	*3.*	*4.*	*5.*	*6.*
1.	Տնտեսություններում գյուղատնտեսական համատարած հաշվառման **1-ԳՀՀ** հարցաթերթ				
2.	Տնտեսություններում գյուղատնտեսական համատարած հաշվառման **1-ԳՀՀ հարցաթերթի հավելված**				
3.	«ԱՀ 2020թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման ընթացքում տնտեսություններում գյուղատնտեսական համատարած հաշվառման 1-ԳՀՀ հարցաթերթի և դրա հավելվածի լրացման» **հրահանգ**		X		X
4.	Ամփոփ տեղեկագիր հաշվային տեղամասի (Ձև N 1-գյուղական)				
5.	Ուղեկցող թերթ (Ձև N 5)				
6.	Հուշատետր հաշվարարի			X	X
7.	Հաշվային տեղամասի սխեմատիկ հատակագիծ			X	X
8.	Գրություն նրանց, ում դժվար է տանը գտնել				
9.	Հաշվարարի վկայական			X	X
10.	Պայուսակ			X	X
11.	Գրենական պիտույքներ, լապտեր, հաշվիչ		X	X	X

ՀԱՇՎԱՐԱՐԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նկարագրեք, խնդրեմ, հաշվային տեղամասում Ձեր աշխատանքի ընթացքում դրական և բացասական երևույթները:

Կային արդյոք առաջարկություններ հաշվային և հրահանգչական տեղամասերում ԳՀՀ անցկացման վերաբերյալ:

Ընդգծեք այն հարցերը, որոնք դժվարություններ են առաջացրել ԳՀՀ հարցաթերթի լրացման ժամանակ:

Առաջանում էին արդյոք դժվարություններ տնտեսություններից ԳՀՀ հարցաթերթի հարցերի պատասխանները լրացնելու ժամանակ:

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ